«Մեծարանք անցեալին,
ջանք ներկային եւ հաւատք ապագային»
Մինաս Չերազ

Երուսաղէմի Ս. Թարգմանչաց վարժարանը թեւակոխեց իր գոյութեան ութերորդ տասնամեակը: Սաղիմահայութեան մէջ հայ դպրութիւնը, հայոց ապագային բազմադարեան պատմութիւնն ու մշակոյթը դարբնող Սրբոց Թարգմանչաց Վարժարանն ունի եօթ տասնամեակների պատկառելի պատմութիւն: Այս կրթօջախում իրենց ուսումնառութիւնն ստացած և տարբեր երկրներում բարձրագոյն ուսման հետեւած, Հայ Երուսաղէմին պատիւ բերող շատ հայորդիներ այսօր ճանաչելի են դարձել ոչ միայն այս Սուրբ Քաղաքում, այլև օտար ափերում, գիտութեան, մշակոյթի ամենատարբեր ոլորտներում: Սրբոց Թարգմանչաց Վարժարանն իր 70 տարիների հունձքով կրթական ծրագրերի և ուսուցման պատկառելի աւանդութիւն է ստեղծել Երուսաղէմի հայ իրականութեան մէջ և շարունակում է մնալ ապագային պանծալի այն հաստատութիւնը, որ կրօնական և բարոյական խորքի վրայ հայ պատանիներին թրծում է ապագային շնչով, նրանց մէջ կերտում ազնիւ նկարագիր, նրանց դարձնում բարեկիրթ, ճշմարիտ հայ: Ապագային Տան լուսաւորութեան ջահը կպվող կայծերից մէկն է Թարգմանչաց Վարժարանը, որի մէջ վառւում և բորբոքւում է հայի վեհ նկարագիրն ու հոգին: Այն ոգի, կորով է ներշնչում աշակերտների մէջ, ապագային եւ եկեղեցական պատմութեան, գրաբար եւ աշխարհաբար լեզուների եւ միւս բոլոր նիւթերի ուսուցմամբ: Ճշմարիտ է այն խօսքը. «Եկեղեցին է այն խարիսխը, որին պէտք է փարի հայութիւնը: Նրա մէջ իր փրկութիւնը գտնելու համար եւ եկեղեցին է այն նաւը, որ հայութեանը պէտք է հասցնի անքոյթ եւ խաղաղ նաւահանգիստ, սակայն պէտք չէ մոռանանք, որ եկեղեցւոյ նախագաւիթը՝ դպրոցն է»: Հարկ է անհուն երախտագիտութեամբ հաւաստել այն կարեւոր իրողութիւնը, որ Երուսաղէմի Առաքելական Սուրբ Աթոռը հիմնել, մշտապէս սատարել, հովանաւորել, ընթացք է տուել սաղիմահայ գաղութի միակ երկսեռ ուսումնական հաստատութեան գործունէութեանը: Չմոռանանք մեր ժողովրդի անցած պատմական երթը, նրա՝ կեանքի վրկանքներով լեցուն տարեգրութիւնը, նրա ցաւատանջ, բազմաչարչար կեանքի վէպը: Աստուծոյ ողորմութեամբ եւ Հայոց խորարմատ, անդրդուելի, նախանձախնդիր եւ երկնասլաց հաւատքի շնորհիւ ունեցել ենք այնպիսի մեծեր, որոնք ի գին մեծ զոհողութիւնների մեր Հայոց տունը լցրել են յաղթերգութեամբ: Ս. Թարգմանչաց Վարժարանի համար, Սրբոց Յակոբեանց միաբանութիւնն անասելի դժուարութիւններ յաղթահարելով կարողացել է եւ շարունակում է պահպանել, ապահովել Վարժարանի կենսագործունէութիւնը: Միաբանութիւնը միշտ ժամանակ է գտել եռանդով ու մեծ նուիրումով իր նպաստը բերելու Հայկական Երուսաղէմի կրթական գործի կազմակերպմանն ու առաջնթացին: Վարժարանի անցած բեղմնաւոր ճանապարհն այսօր էլ մեզ պատգամում է արդիական պահանջների հետ միշտ պահել հայեցի նկարագիրը, լինել տէրը Հայ գերդաստանի, նրա արեան ժառանգորդները:

Այս յոբելեանի առիթով մեր վարժարանի սաներին մաղթում ենք արի, տոկուն եւ ողջամիտ լինել, քանզի անհատներն ու ազգերը կանգուն պահողն այս երեք յատկանիշներն են՝ հաւատքի մէջ արիութիւնը, փորձութեան մէջ տոկունութիւնը, յաջողութեան մէջ ողջամտութիւնը: Զօրավիգ լինենք, վսեմ անմնացորդ նուիրում մաղթենք մեր հարազատ ժողովրդին, մեր Մայր Հայրենիքին:

Թէոդորոս Աբղ. Զաքարեան
Տեսուչ Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանի

digitised by A.R.A.R.@